



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի
ընդհանուր ժողովի
19.04.2024թ. թիվ 2 որոշումով

APPROVED

As per the resolution number 2of the General
meeting of shareholders of
ARMECONOMBANK OJSC dated 19.04.2024

Խորհրդի նախագահ
Սարիբեկ Սուքիասյան
Chairman of the Board
Saribek Sukiasyan

.....
ստորագրություն/ signature

Վարչության նախագահ
Արտակ Առաքելյան
Chairman of the Executive Board
Artak Arakelyan

.....
ստորագրություն/ signature

ԳՐԱՆՑՎԱԾ Է:

ՀՀ Կենտրոնական բանկում

REGISTERED

At the Central Bank of Armenia
ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝
President of the Central Bank of Armenia

.....
ստորագրություն/ signature

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
CHARTER OF**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԲԸ
"ARMENIAN ECONOMY DEVELOPMENT BANK" OJSC
(նոր խմբագրություն)
(new editing)**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. 1987թ. ստեղծված նախկին ԽՍՀՄ Բնակարկային Հայկական Հանրապետական Բանկի հիման վրա ՀՀ Նախարարների խորհրդի 14.02.91թ. թիվ 115 որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության պետական ակցիոներական կոմերցիոն բանկը (1991-93թթ. «Հայպետարբանկ» ՓԲԸ) 1993 թվականի դեկտեմբերի 28-ն վերագրանցվել է որպես «Հայաստանի Էկոնոմիկայի զարգացման բաժնետիրական բանկ»: Հայկոնոմբանկի բաժնետերերի 1995թ. մարտի 14-ին կայացած ընդհանուր ժողովի որոշմամբ այն վերակազմավորվել է «Հայաստանի Էկոնոմիկայի զարգացման բանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ):

<<ԲՏԱ Բանկ>> ՓԲԸ-ն հանդիսացել է <<ԲՏԱ ԻնվեստԲանկ>> ՓԲԸ իրավահաջորդը (ֆիրմային անվանումը փոխվել է <<ԲՏԱ ԻնվեստԲանկ>> ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի 13.08.2008թ. թիվ 3 արձանագրությամբ), որն իր հերթին հանդիսացել է <<Միջազգային Ինվեստիցիոն Բանկ>> ՓԲԸ իրավահաջորդը (ֆիրմային անվանումը փոխվել է <<Միջազգային Ինվեստիցիոն Բանկ>> ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի 16.05.2005թ. թիվ 1 արձանագրությամբ) <<Միջազգային Ինվեստիցիոն Բանկ>> ՓԲԸ-ն իր հերթին հանդիսացել է վերակազմավորված <<Սևան Բանկ>> ՓԲԸ իրավահաջորդը, որը կազմավորվել է <<Սևան Բանկ>> ՓԲԸ հիմնադիրների (փայտերերի) ընդհանուր ժողովի որոշմամբ՝ 01.06.1991թ. Հիմնադիր պայմանագրի համաձայն:

Բանկի և <<ԲՏԱ Բանկ>> ՓԲԸ-ի բաժնետերերի 18.03.2016թ. ընդհանուր ժողովների որոշումների համաձայն երկու բանկերի միջև 06.06.2016թ. ստորագրվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 14.06.2016թ. հաստատվել է <<ԲՏԱ Բանկ>> ՓԲԸ-ի Բանկին միացման պայմանագիր, երկու բանկերի բաժնետերերի 13.08.2016թ. համատեղ ժողովի կողմից հաստատվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 24.08.2016թ. գրանցվել է փոխանցման ակտը և միացման արդյունքում որպես պահպանվող բանկ ու <<ԲՏԱ Բանկ>> ՓԲԸ-ի իրավահաջորդ է համարվում Բանկը:

1.2. Բանկի լրիվ ֆիրմային անվանումը՝ հայերեն՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ անգլերեն՝ «ARMENIAN ECONOMY DEVELOPMENT BANK» OPEN JOINT STOCK COMPANY ռուսերեն՝ «БАНК РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ АРМЕНИИ» ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

1.3. Բանկի կրճատ անվանումը հայերեն՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ անգլերեն՝ «ARMECONOMBANK» OJSC ռուսերեն՝ «АРМЭКОНОМБАНК» ОАО

1.4. Բանկի իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան փող. 23/1:

1.5. Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու պահից:

1.6. Բանկի հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.7. Բանկն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումներով, այլ նորմատիվ և ներքին իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.8. Բանկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, իր անվանմամբ և խորհրդանիշով կլոր կնիք և անկյունային որոշմակնիք (հայերեն, անգլերեն և ռուսերեն

1. GENERAL PROVISIONS

1.1 The State Joint Stock Commercial Bank of the Republic of Armenia established on the basis of the former USSR Housing-Social Bank incorporated in 1987 by decree No. 115 of the Board of Ministers dated 14.02.91 (in 1991-1993 called "Haypetarbank" CJSC) was on December 28, 1993 re-registered as a "Armenian Economy Development Joint Stock Bank". By the decision of the general meeting of the shareholders of Armeconombank dated March 14, 1995 it was reorganized into "Armenian Economy Development Bank" Open Joint Stock Company (hereinafter - the Bank).

"BTA Bank" CJSC is "BTA InvestBank" CJSC's successor (the firm name was changed by "BTA InvestBank" CJSC's shareholders General Meeting Protocol No. 3 dated 13.08.2008) which in its turn was the "International Investment Bank" CJSC's successor (the firm name was changed by "International Investment Bank" CJSC's shareholders General Meeting Protocol No. 1 dated 16.05.2005) and "International Investment Bank" CJSC in its turn was the successor of reorganized "Sevan Bank" CJSC, that had been incorporated by "Sevan Bank" founders (stockholders) general meeting decision dated 01.06.1991 on the basis of Articles of incorporation.

On the basis of the merger contract entered into between the Bank and "BTA bank" JSC on 06.06.2016, as well as the decisions of the general meetings of shareholders of the said banks dated 18.03.2016 approved by RA Central Bank on 14.06.2016 and as a result of merger of "BTA bank" CJSC with the Bank the Bank will be considered to be the surviving and successor bank from the moment of entry into force of the transfer act approved by the joint meeting of the two banks dated 13.08.2016 and dated 24.08.2016 by the RA Central Bank has been registered act and as the result of joint as a preserved bank and "BTA bank" JSC the Bank is considered to be the successor.

1.2. Full firm name of the Bank is:
in Armenian: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
in English: "ARMENIAN ECONOMY DEVELOPMENT BANK" OPEN JOINT STOCK COMPANY
in Russian: "БАНК РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ АРМЕНИИ" ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО.

1.3. Brief name of the Bank is:
in Armenian: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ in English: "ARMECONOMBANK" OJSC in Russian: "АРМЭКОНОМБАНК" ОАО

1.4. Legal address of the Bank is: 23/1 Amiryan str., Yerevan city, 0002, Republic of Armenia.

1.5. Bank is considered as established and acquires the status of a legal entity upon its registration in the Central Bank of RA and has a right to exercise banking activity upon getting the license by the Central Bank of RA permitting to exercise corresponding banking activities.

1.6. The founding document of the Bank is the present Charter, which requirements are obligatory for the Shareholders and governing bodies of the Bank.

1.7. During realizing its activities the Bank is guided by legislation of the Republic of Armenia, decisions of the Board of Central Bank of RA, other normative and inner legal acts and the present Charter.

1.8. The Bank has a property (assets) belonging to him by the right of ownership, a round seal of its firm name and emblem and stamp (engraved in Armenian, English and Russian languages), as well as corresponding seals for branches and representations of the Bank.

1.9. The establishment, registration and liquidation of branches and

լեզվով գրառումներով), ինչպես նաև համապատասխան կնիքներ Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համար:

- 1.9. Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, գրանցումը և լուծարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 1.10. Բանկի մասնաճյուղերը բանկային գործունեություն կամ ֆինանսական գործառնություններ են իրականացնում Բանկի անունից սույն կանոնադրության և Բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում, որոնք ամրագրվում են Բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններում:
- 1.11. Բանկը կարող է ՀՀ օրենսդրությամբ համապատասխան հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ և մասնակցել դրանցում:
- 1.12. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով (միջոցներով), եթե օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված:
- 1.13. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և Բանկը պատասխանատվություն չեն կրում միմյանց պարտավորությունների համար, եթե նրանք այդպիսիք չեն ստանձնել:
- 1.14. ՀՀ Կենտրոնական բանկը և Բանկը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե նրանք այդպիսիք չեն ստանձնել:
- 1.15. Բանկը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բանկի բաժնետերերը Բանկի պարտավորությունների համար պատասխանատվություն են կրում կանոնադրական հիմնադրամում իրենց կատարած ներդրման չափով, բայց ոչ պակաս բաժնետոմսերի անվանական արժեքից:
- 1.16. Բանկը պատասխանատու է իր կառուցվածքային ստորաբաժանումների և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների պարտավորությունների համար:
- 1.17. Բանկն ինքնուրույն իրականացնում է իր գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը:

2. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

- 2.1. Բանկը ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.
 - ա/ ընդունել ցպահանջ և ժամկետային վաճառքներ.
 - բ/ տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.
 - գ/ տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ). դ/ բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.
 - ե/ մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.
 - զ/ թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել.
 - է/ ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել.
 - ը/ մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).
 - թ/ գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և

representations of the Bank are carried out according to procedure defined by RA legislation and the present Charter.

- 1.10. The Bank's branches realize bank activities or financial operations on behalf of the Bank within the limits of powers delegated by the Bank and present Charter, fixed in the charters approved by the Bank Board.
- 1.11. In accordance with the procedures provided by RA legislation the Bank has a right to establish daughter and subsidiary companies with a status of legal entity and participate in it.
- 1.12. The Bank is responsible for its obligations by its property (assets) belonging to him by the right of ownership, in case if there is no other provisions provided for by the legislation of RA.
- 1.13. State and local governing authorities and the Bank are not responsible for each other's obligations, if they are not taken it.
- 1.14. RA Central Bank and the Bank are not responsible for each other's obligations, if they are not taken it.
- 1.15. The Bank is not responsible for its shareholders' responsibilities. Shareholders of the Bank are responsible for the Bank's obligations in amount of their investments made in the charter fund, but not less than the nominal value of shares.
- 1.16. The Bank is not responsible for obligations of its structural subdivisions and branches and representations without status of legal entity.
- 1.17. The Bank shall independently possess, use and dispose of its assets.

2. FINANCIAL TRANSACTIONS AND OTHER OPERATIONS REALIZED BY THE BANK

- 2.1. According to the procedure defined by the legislation of RA the Bank can exercise the following transactions:
 - a) accept demand and time deposits;
 - b) provide commercial and consumer loans, including mortgage credits, realize financing of debts or commercial transactions, and factoring;
 - c) endorse bank guarantees and Letters of Credit;
 - d) open and run accounts, including the correspondent accounts of other banks;
 - e) provide other services connected with payments and settlements, and (or) other serving of the customers' accounts;
 - f) emit, purchase (discount), sell or manage any securities, to conduct similar other transactions;
 - g) make investment or subscribed activity,
 - h) act as a financial agent (representative), to manage securities and investments of other persons (trust /mandated/ management);
 - i) purchase, sell or manage bank gold and standard bullions and memorial coin;

ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.
 ժ/ գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.

ժա/ իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ), ժբ/ ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժգ/ մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

ժդ/ ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

ժզ/ իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ,

ժէ/ իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ գործառնություններ:

- 2.2. Բանկը նշված գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:
- 2.3. ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությամբ Բանկը կարող է իրականացնել նաև այնպիսի գործունեություն կամ գործառնություններ, որոնք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության հետ:
- 2.4. Նշված գործառնությունները Բանկը կատարում է պայմանագրերի հիման վրա, որոնցում սահմանվում են կողմերի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, տոկոսադրույքները, արտոնությունները, տույժերը, պարտավորությունների ապահովման ձևերը, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:
- 2.5. Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր և պատասխանող դատարանում:
- 2.6. Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը
 ա/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4.99 տոկոս և ավելին է,
 բ/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15%-ը,
 գ/ բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35%-ը :
 Մույն կետով նախատեսվածը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով:
- 2.7. Բանկն իրավունք ունի թղթակցային հաշիվներ բացել այլ բանկերում:
- 2.8. Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի տոկոսադրույքները և միջնորդավճարների չափը:
- 2.9. Բանկը երաշխավորում է իր հաճախորդների և թղթակցից բանկերի ավանդների, հաշիվների և գործառնությունների գաղտնիությունը և ամբողջականության պահպանումը:
- 2.10. Բանկում գտնվող հաճախորդների դրամական միջոցների (ներառյալ քաղաքացիների ավանդները) և այլ գույքի վրա կարող է կալանք դրվել և բռնագանձում տարածվել միայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

j) purchase and sell (exchange) currency, including to sign futures of dram and currency, options or other transactions;

ja) conduct financial leasing transactions;

jb) ensure the custody of precious metals, stones, jewelry, securities, documents or other values;

jc) provide financial and investment consulting;

jd) establish and operate a database of the customers' creditworthiness, make activity for recovering the debts;

je) realize insurance certificates and (or) contracts, conduct transactions of insurance agent in accordance with the procedure defined by the Law.

jf) realize other functions foreseen by RA law "On Banks and Banking Activity".

2.2. The Bank carries the mentioned financial transactions both in drams and foreign currencies.

2.3. The Bank has a right to exercise such an activities or functions which are closely connected with the banking activities or financial transactions and have been allowed by the Central Bank of RA.

2.4. The Bank realizes the mentioned functions on the basis of the contract which defines the parties' rights, obligations, responsibilities, percentage, privileges, penalties, types of securing of obligations which do not contradict RA legislation.

2.5. Bank has a right to execute a contract, to acquire and exercise property and personal non- property rights, bear liabilities, appear in the Court as a plaintiff or defendant.

2.6. Without prior approval of RA Central Bank the Bank is prohibited to conduct such operations or transactions, as a result of which the Bank's participation:

- a) in another person's charter capital reaches or exceeds 4,99%;
- b) in a single person's charter capital exceeds 15% of the Bank's total capital;
- c) in all persons' charter capitals exceeds 35% of the Bank's total capital.

The specified in this paragraph is regulated by RA law "On Banks and Banking Activity".

2.7. The Bank has a right to open correspondent accounts in other banks.

2.8. The Bank shall independently possess the rates and commission fees of deposits, rendered credits.

2.9. The Bank guarantees the privacy of its customers' and correspondent banks' deposits, accounts and operations considered as banking secrecy.

2.10. The Bank customers' deposits, their monetary funds and other property accepted by the Bank into custody may be seized, arrested (forfeited) or confiscated by competent state authorities only in cases and by the order stipulated by the RA legislation

3. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ, ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

- 3.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը ձևավորվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից և որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Բանկի գույքի նվազագույն չափը:
- 3.2. Բանկի բաժնետոմսերը և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումը կատարվում է բաց կամ փակ բաժանորդագրության միջոցով:
- 3.3. Սովորական բաժնետոմսերի տեսակարար կշիռը Բանկի կանոնադրական հիմնադրամում պետք է լինի առնվազն 75%:
- 3.4. Օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկի բաժնետոմսերը թողարկվում են ազատ շրջանառության իրավունքով և կարող են գնվել, վաճառվել, գրավադրվել, ժառանգության իրավունքով փոխանցվել այլ անձանց ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների կողմից:
- 3.5. Բաժնետոմսերի արժեքը լրիվ վճարելուց հետո բաժնետերերի բաժնետոմսերը հաշվառվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, մասնագիտացված կազմակերպության կողմից, որոնց վերաբերյալ բաժնետիրոջը կարող է տրվել քաղվածք: Նշված քաղվածքը արժեթուղթ չէ: Բանկի թողարկված բաժնետոմսերը, օրենքին համապատասխան, ապանյութականացված են:
- 3.6. Բանկի կողմից իր բաժնետոմսերը գեղելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերելը, դրանք գրավ ընդունելով վարկ տալը արգելվում է, բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի վեցերորդ մասին համապատասխան՝ Բանկի կողմից իր բաժնետոմսերը ձեռք բերելու դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Բանկի բաժնետոմսերը գրավ ընդունելը կամ ձեռք բերելը անհրաժեշտ է սովյալ Բանկի նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար, ընդ որում, Բանկը պարտավոր է սովյալ բաժնետոմսերի սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից 2 ամսվա ընթացքում իրացնել դրանք: Ժամկետը կարող է երկարացվել ևս 6 ամսով ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությամբ:
- 3.7. Բանկի փաստացի համարված կանոնադրական հիմնադրամը կազմում է 30,801,894,720 (երեսուն միլիարդ ութ հարյուր մեկ միլիոն ութ հարյուր ինսունչորս հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ, որը ներառում է 11,746,584 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր ութսունչորս) սովորական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 2,080 (երկու հազար ութսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով և 424,600 (չորս հարյուր քսանչորս հազար վեց հարյուր) արտոնյալ բաժնետոմսեր յուրաքանչյուրը՝ 15,000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:
 - 3.7.1. Բանկի հայտարարած տեղաբաշխման ենթակա սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 10,000,000 (տաս միլիոն) սովորական բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 2,080 (երկու հազար ութսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով:
 - 3.7.2. Բանկի հայտարարած տեղաբաշխման ենթակա արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 228,479 (երկու հարյուր քսանույթ հազար չորս հարյուր յոթանասունհինգ) հատ հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 15,000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, յուրաքանչյուրի լուծարային արժեքը անվանական արժեքի չափով, յուրաքանչյուրի համար դրա անվանական արժեքի նկատմամբ տարեկան 14(տասնչորս) տոկոս վճարվող շահութաբաժնի չափով: Սույն կետի համաձայն հայտարարված արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման նկատմամբ տարածվում են

3. CHARTER FUND (CAPITAL) OF THE BANK, OTHER FUNDS.

- 3.1. The charter fund (charter capital) of the Bank is formed from the nominal value of the shares obtained by the shareholders and defines the minimal size of the Bank's assets securing the debtors' interests.
- 3.2. Distribution of Bank's shares and securities convertible into stocks realized by means of open or close subscription.
- 3.3. The specific weight of common (ordinary) shares in the charter fund of the Bank have to be at least 75%.
- 3.4. According to the procedure defined by legislation the Bank's shares are issued with the right of free turnover and can be bought, sold, loaned, by inheritance right transferred to other persons both by residents and non-residents.
- 3.5. After fully paying of shares' value the shareholders' shares according to the law of the Republic of Armenia "On Securities' Market" are registered by specialized organization, about which the shareholder is given an excerpt. The mentioned excerpt is not a security. The shares issued by the Bank, in correspondence with law, are dematerialized.
- 3.6. The Bank cannot discount, buy or obtain by other way of compensation its shares, accepting it as a pawn to give credits, except the cases mentioned in point six article 36 of Law of the Republic of Armenia "On Banks and Banking Activity", as well as in the cases when it is necessary to obtain or accept as a pawn the shares of the Bank for prevention of the possible losses aroused in the result of non-fulfillment of not properly fulfillment of obligations in regard with the Bank, but the Bank is obliged to realize shares from the moment of obtaining those by property right, within 2 months period. The mentioned period can be extended up to 6 months by permission of RA Central Bank.
- 3.7. Actually replenished Charter Fund (capital) of the Bank comprises 30,801,894,720 (thirty billion eight hundred and one and eight hundred ninety-four thousand seven hundred twenty) AMD, which includes 11,746,584 (eleven million seven hundred forty-six thousand and five hundred eighty-four) common shares, each with nominal value of 2,080 (two thousand eighty) RA drams and preferred shares 424,600 (four hundred twenty four thousand six hundred) each with nominal value of 15,000 (fifteen thousand) RA drams.
 - 3.7.1. Total number of the Bank's declared shares comprises 10,000,000 (ten million) common shares, each with nominal value of 2,080 (two thousand eighty) RA drams.
 - 3.7.2. Total number of the Bank's privileged shares comprises 228.479 (two hundred twenty-eight thousand four hundred seventy nine) privileged shares each with nominal value of 15,000 (fifteen thousand) AMD, the price of each liquid value in nominal value, annually 14 percent in the amount of paid dividends.According to the present clause the following terms are set towards the Bank's privileged shares:
 - 1) In case of the liquidation of the Bank the demands of the shareholder are subject to satisfaction after satisfying all the other demands of the Bank, except the demands of the Bank's declared shares.
 - 2) Bank's privileged shares can't be supported with the guarantee or guarantee ship of the interconnected persons, or the owner of the privileged shares can't be in economical or juridical better condition according to the present charter and get the satisfaction of his demands earlier, than it is provided by the terms set for the bank liquidation. Moreover the demand of the owner of privileged shares can't be calculated with the other responsibilities which the owner of privileged shares have

հետևյալ պահանջները.

1) բանկի լուծարման դեպքում արտոնյալ բաժնետիրոջ պահանջները (այդ թվում՝ շահութաբաժինների գծով) ենթակա են բավարարման բանկի մյուս բոլոր պահանջատերերի պահանջները բավարարվելուց հետո, բացառությամբ սովորական բաժնետերերի պահանջների.

2) արտոնյալ բաժնետոմսերը չեն կարող ապահովվել բանկի հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, կամ արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը տնտեսապես և (կամ) իրավական տեսանկյունից ավելի բարենպաստ կարգավիճակում չի կարող հայտնվել կանոնադրության համաձայն կամ որևէ այլ կերպ և ստանալ իր պահանջի բավարարում ավելի շուտ, քան բանկի լուծարման դեպքում օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը: Ընդ որում, արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ պահանջը չի կարող հաշվանցվել (գուտացվել) արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ՝ բանկի հանդեպ ունեցած այլ պարտավորությունների հետ.

3) արտոնյալ բաժնետոմսերը թողարկվում են անժամկետ.

4) արտոնյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինը՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի Բանկի տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը կամ բանկի ֆինանսական վիճակի վատթարացմանը, ընդ որում՝

ա. շահութաբաժնի լրիվ կամ մասնակի չվճարումը ենթակա չէ կուտակման և վճարման հետագայում,

բ. բանկի և արտոնյալ բաժնետիրոջ միջև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում բանկի համար շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում արտոնյալ բաժնետիրոջը, բացառությամբ, եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել արտոնյալ բաժնետոմսին հասանելիք շահութաբաժինը.

5) արտոնյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինները ենթակա են վճարման միայն բանկի գուտ շահույթից և (կամ) դրա հաշվին ձևավորված հիմնադրամներից, ընդ որում, շահութաբաժինները վճարվում են միայն դրամական միջոցով.

6) արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարվող շահութաբաժնի չափը չի կարող կախվածության մեջ դրվել բանկի վարկանիշից, ֆինանսական վիճակը բնութագրող որևէ ցուցանիշից կամ արտոնյալ բաժնետոմսերի գծով նախկինում վճարված շահութաբաժինների փաստացի մեծությունից.

7) բանկն անուղղակիորեն չի կարող ֆինանսավորել արտոնյալ բաժնետոմսերի ձեռքբերումը.

8) արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն իրավունք չունի որևէ ձևով սահմանափակել կամ խոչընդոտել բանկի կողմից լրացուցիչ սովորական կամ արտոնյալ բաժնետոմսերի հետագա թողարկմանը կամ ստորադաս փոխառությունների ներգրավմանը:

3.8. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամի չափը՝ Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերն իրացվել և վճարվել են ամբողջությամբ:

3.9. Բանկի փաստացի համարված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը արգելվում է, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

towards the bank.

3) The privileged shares are issued for an indefinite period.

4) The income share of the privileged shares completely or partially is not subject to payment if it can bring to the violation of economic norms of the Bank or to the worsening of Bank's financial status, moreover:

a) Complete or partial non-payment of the share is not subject to accumulation and payment,

b) Can't be foreseen any restriction between the Bank and privileged shareholder according to any juridical document in case of complete or partial non-payment of the share, can't be foreseen any right of such restrictions according to any juridical document, except the cases when the restriction referrers to the payment of shares of declared shares. Moreover the restrictions mentioned in the present paragraph which refer to the payment of shares of declared shares can refer to the period when the privileged shares income share has not been completely or partially paid.

5) The income shares of privileged shares are subject to payment only from the net profit of the Bank or from the fund formed at its expense, moreover the income shares are paid only in monetary means.

6) The income share amount which is paid of privileged shares can't depend on Bank rate, from any indicator characterizing the financial status of the Bank, or previously paid income shares factual greatness of privileged shares.

7) The bank can't indirectly finance the application of privileged shares.

8) The owners of privileged shares have no right to restrict or violate the issuance of additional declared and privileged shares or the involvement of subordinated loans.

3.8. The Bank may increase its Charter Fund by increasing the nominal value of shares or placing additional shares, if previously placed shares have been paid up in full.

3.9. Reduction of the Bank actually replenished Charter Fund is prohibited, with the exception of cases envisaged by RA legislation.

3.10. The Bank shall establish a reserve fund in the size of at least 15 percent of the Charter Fund. If the amount of the reserve fund is less than the one set by the Bank Charter, then deductions to the reserve fund shall be made both from the Bank profit in the amount of at least 5%, as well as out of the funds generated from the difference between cost of issue and face value of the Bank's new shares.

The reserve fund shall be used by the board decision for covering the Bank losses as well as for the redemption of the Bank bonds, if the Bank's profit and other assets are not sufficient for such purposes. The reserve fund cannot be used for other purposes.

3.11. The Bank by the decision of shareholders of the Bank may also create employee share ownership fund which will be used according to procedure defined by RA law "On Joint Stock Companies".

3.12. By the Bank's Board decision it may be created other funds as well, on the purpose of promoting Bank's economic development and satisfaction of social-economic requirements of Bank's employees. The Bank Board shall determine the procedure of formation and use of the Funds, as well as the procedure and sizes of their deduction.

3.13. The Bank's share premium may be used only in the event of reducing the charter capital in accordance with Article 36 of the Law of the Republic of Armenia "On Banks and Banking Activities" or to cover the losses in the event of the Bank's insolvency, or it may be used to increase the par value of the Bank's shares.

- 3.10. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական հիմնադրամի 15% գումարի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Բանկի կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, հասկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի առնվազն 5%-ի չափով, ինչպես նաև Բանկի նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է խորհրդի որոշմամբ Բանկի կորուստները ծածկելու, ինչպես նաև Բանկի պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը ետ գնելու համար, եթե Բանկի շահույթը այդ նպատակին չի բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:
- 3.11. Բանկի բաժնետերերի ժողովի որոշմամբ Բանկի շահույթի հաշվին կարող է ստեղծվել աշխատակիցների բաժնետիրացման հատուկ հիմնադրամ, որը օգտագործվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:
- 3.12. Բանկի խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ, որոնք նպատակ ունեն նպաստել Բանկի տնտեսական զարգացման և Բանկի աշխատողների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը: Այդ հիմնադրամների հասկացումների կարգը և չափը որոշում է Բանկի խորհուրդը:
- 3.13. Բանկի Էմիսիոն եկամուտը կարող է օգտագործվել միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կանոնադրական կապիտալը նվազեցնելու դեպքում կամ բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով, կամ կարող է ուղղվել բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) անվանական արժեքի ավելացմանը:

4. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

- 4.1. Բանկի կանոնադրական հիմնադրամի ձևավորմանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք:
- 4.2. Բանկի բաժնետերերը պարտավոր են.
 ա/ չհրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ,
 բ/ բաժնետերերը կարող են կրել Բանկի կանոնադրությամբ նախատեսված և օրենքին ու այլ իրավական ակտերին չհակասող այլ պարտավորություններ,
 գ/ ձեռնպահ մնալ գործունեության այն բոլոր տեսակներից, որոնք կարող են վնաս պատճառել Բանկին:
- 4.3. Բանկի յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի.
 ա/ մասնակցել Բանկի ընդհանուր ժողովին վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
 բ/ մասնակցել Բանկի կառավարմանը,
 գ/ ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից, դ/ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված ցանկացած տեղեկատվություն,
 ե/ ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձին,
 զ/ հանդես գալ առաջարկություններով բաժնետերերի ընդհանուր ժողովում,
 է/ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

4. SHAREHOLDERS OF THE BANK

- 4.1 To the formation of the Bank's charter can participate both physical persons and legal entities of the Republic of Armenia and foreign states.
- 4.2. Shareholders of the Bank are obliged:
- not to disclose secret information concerning Bank's activities,
 - to bear obligations envisaged by the Law, other legal acts and the Bank's Charter,
 - refrain from such kind of activities which will cause damage to the Bank,
- 4.3. Each common share of the Bank gives the same rights to the shareholder being its owner. A Shareholder possessing common shares is entitled to:
- participate in the Bank Shareholders' General Meeting with the right to vote on all issues falling within the competence of the Meeting ;
 - participate in the management of the Bank;
 - receive dividends out of profit gained as a result of the Bank activities,
 - receive any information concerning the Bank activities pursuant to the procedure envisaged by the RA legislation;
 - authorize a third person to represent of his/its rights at the Meeting;
 - submit proposals to the General Meetings
 - vote at the Bank Shareholders' General Meeting with a number of votes proportionate to the shares belonging to him/it;
 - file an appeal with the court against decisions taken by the Bank Shareholders' General Meeting that contradict the RA applicable legislation;
 - in case of the Bank liquidation receive a part of the Bank

ը/ հայցով դիմել դատարան Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

թ/ Բանկի լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը,

ժ/ձեռք բերել իրեն պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք, եթե՝

1. որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել:

2. կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել է նշված բաժնետերի իրավունքները, և նա դեմ է քվեարկել կամ չի մասնակցել այդ հարցի քվեարկությանը,

ժա/ օգտվել օրենքով նախատեսված այլ իրավունքներից:

4.4. Արտոնյալ բաժնետոմս ունեցող բաժնետերերն իրավունք ունեն

ա/ մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով օրենքով և բանկի կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

բ/ ստանալ եռամսյակային վճարներ(շահութաբաժիններ),գ/ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված ցանկացած տեղեկատվություն,

դ/ ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը Բանկի լուծարման դեպքում:

4.5. Արտոնյալ բաժնետոմս ունեցող բաժնետերերն իրավունք ունեն մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին, եթե ժողովում քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցեր, կամ Բանկի կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը: Սույն ենթակետով սահմանված հարցերով ժողովին մասնակցությունը տեղաբաշխված մեկ արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք:

4.6. Հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխման որոշում ընդունվելու դեպքում՝ սովորական բաժնետոմսերի սեփականատերերը ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնետոմսերին համամասնորեն տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք:

Նախապատվության իրավունքի իրականացման հնարավորության մասին սովորական բաժնետոմսերի սեփականատերերը տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն 30 օր առաջ ծանուցվում են ժողովի գումարման համար սահմանված ծանուցման կարգով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը իրենց նախապատվության իրավունքը իրականացնում են բաժնետոմսերի տեղաբաշխումը սկսվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ Բանկին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է բովանդակի՝

ա) բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը), պետական գրանցման տվյալները (անձը հաստատող փաստաթղթի տվյալները), գտնվելու (բնակության) վայրը.

բ) ձեռք բերվող բաժնետոմսերի քանակը.

property (funds) due to them;

j) obtain the right of demand on redemption of shares belonging to him, if:

1. the decision was made on reorganization, cease of preference right and making of great deals and he voted against it or did not vote.

2. in present Charter additions and amendments were made, or the Charter was confirmed with new edition in the result of which his right were restricted, and he voted against it or did not vote

k) enjoy other rights envisaged by the present Charter.

4.4. A Shareholder possessing preference shares is entitled to:

a) participate in the General Meeting of the Bank without voting right;

b) receive dividends out of the Bank profit gained as a result of the Bank activities according to the order and amount defined by the general meeting of shareholders,

c) receive any information on the Bank's economic activity (other than confidential documents), according to the procedure defined by law;

d) in case of the Bank liquidation receive a part of the Bank property (funds) due to them.

4.5 The shareholders owning privileged shares are entitled to take part in the general meeting of the Bank's shareholders if that meeting discusses issues related to the reorganization or liquidation of the bank, changes in, or amendments to, the Bank's charter, which restrict the rights of privileged stockholders, including the definition of, or increase in, dividends (or) liquidation costs. Participation in the meeting in accordance with the procedures outlined in the sub-clause entitles an owner of one distributed stock to one vote.

